

ՍՈՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ՅՈՒՆԳԻ
ՍԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Դեռևս անտիկ ժամանակներից հասարակության առջև դրված է եղել օժտվածության հիմնախնդիրը՝ իր տարաբնույթ հիմնահարցերով: Այսօր էլ օժտվածության երևույթը հոգեբանության կարևորագույն և բարդ խնդիրներից մեկն է, որի շուրջ քննարկումները դեռևս շարունակվում են, և շատ հարցեր մնում են չպարզաբանված: Այդ քննարկումների արդյունքում առկա են մի շարք մեկնաբանություններ օժտվածության երևույթի վերաբերյալ: Հոգեբանությունը կոչված է անդրադառնալու օժտվածությանը ոչ միայն այն պատճառով, որ այն հասարակության առջև դրված խնդիրներից մեկն է, այլև այն դարձել է անձնային խնդիր. այն է՝ ինչպես օգնել օժտված երեխային՝ հարմարվելու հասարակությանը՝ հաշվի առնելով նրա առանձնահատկությունները:

Սույն հոդվածի շրջանակներում մենք փորձել ենք անդրադառնալ այն մոտեցումներին, ըստ որոնց կարելի է դիտարկել օժտվածությունը: Ասենք, որ չկա մեկ չափանիշ, որով կարելի է առանձնացնել, սահմանազատել և փաստել օժտվածությունը: Այդ իսկ պատճառով նպատակահարմար գտանք հիմնականում անդրադառնալ Յունգի մեկնաբանություններին՝ շղթայական կապ տեսնելով դրանց և հանրահայտ մարդկանց կենսագրականների միջև: Հոդվածում անդրադարձել ենք միայն այն մեկնաբանություններին, որոնք դարձել են ժամանակի հրամայականը և անհապաղ լուծում են պահանջում: Բազմիցս նշվել է, որ շրջապատը և հասարակությունը կարող են բարերար ազդեցություն թողնել օժտվածության զարգացման վրա: Իսկ որպեսզի ազդեցությունն իր նպատակին ծառայի, պետք է հաշվի առնվեն օժտված երեխաների բոլոր առանձնահատկությունները: Այստեղ նպատակահարմար է նշել է. Լանդաուի բնորոշումը, ըստ որի՝ օժտված երեխան նման է երկար ճանապարհով վագրորդի, որը բոլորից արագ է վազում, ինտելեկտուալ հնարավորություններով նա մեծամասամբ առաջ է ընկնում, բայց իր զգացմունքներով հետ է մնում [3]: Սա մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ այդպիսի երեխաները աջակցության կարիք ունեն, քանզի եթե չօգնեն այդպիսի երեխային, ապա վերջինս կարող է հրաժարվել իր բացառիկությունից, այսինքն՝ իր օժտվածությունից: Իսկ աջակցությունը ենթադրում է համալիր միջոցառումների շարք, որոնք իրականացվում են թե՛ ծնողների, թե՛ ուսուցիչների կողմից:

Դիտարկենք այն խնդիրները, որոնք առկա են օժտված երեխաների մոտ ուսումնական գործընթացում: Այս առումով հատկապես շեշտը դնում ենք ուսումնական գործընթացի վրա, քանի որ օժտվածությունը երկար ժամանակ կարող է աննկատ մնալ, իսկ այն բնորոշելուն օգնում է միայն երեխայի անհատականության հանգամանակից ուսումնասիրումն ու դիտումը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Վերջին հաշվով, դպրոցը մեծ աշխարհի մի մասն է, և ինչպես բջիջը, իր մեջ ամփոփում է այն բոլոր գործոնները, որոնց հետ հետագայում բախվում է երեխան և որոնց ազդեցությունը պետք է հաղթահարի: Լերա Յուլիանուտը, անդրադառնալով օժտված երեխաների հիմնախնդիրներին, որպես այդպիսին առանձնացնում է դպրոցի հանդեպ վատ վերաբերմունքը՝ բացատրելով այդ ամենը նրանով, որ ուսումնական ծրագիրը ծանծաղի և անհետաքրքիր է օժտված երեխայի համար: Այդպիսի ծանծրույթի մասին է պատմում նաև Յունգը: Իր ինքնակենսագրականից փաստեր բերելով՝ նշում է, թե որքան է ծանծրացել դասի ընթացքում, մինչ ուսուցիչը ջանք է թափել այն աշակերտների վրա, որոնք վատ առաջադիմություն են ունեցել: Կարծում ենք, որ այս երևույթը մինչ օրս էլ շարունակվում է մնալ որպես գերխնդիր, թեև կան մի շարք ուսումնական հաստատություններ, որոնք փորձում են լուծել այս խնդիրը՝ հազցեցնելով ուսումնական ծրագիրը:

Հանրահայտ մարդկանց կենսագրականին անդրադառնալով՝ իսկապես կարող ենք նկատել, որ նրանցից ոչ բոլորն են լավ աշակերտի համբավ ունեցել: Այդ է մատնանշում Յունգը, ասելով, որ օժտված երեխան իրականում բարդ խնդրի առջև է կանգնեցնում դպրոցին, որը հնարավոր չէ անտեսել:

Օժտված երեխայի մեջ դժվար է տեսնել լավ աշակերտի, քանզի նա կարող է առանձնանալ այնպիսի բնութագրերով, ինչպիսիք են ցրվածությունը, անուշադրությունը, եսակենտրոնությունը: Իսկ որպեսզի այս ամենն ավելի համոզիչ լինի, անդրադառնանք Չարենցի կենսագրությանը: Պատանեկության տարիների Չարենցին այսպես են բնութագրում. «Քայլում է տասնվեցամյա պատանին՝ ռեալական դպրոցի անհնազանդ աշակերտը, «ծիու պես անտարբեր» դեպի շրջապատը, ինքն իր հետ, վերացած, նախրյան քաղաքի փոշոտ փողոցներով գնում է դեպի քաղաքային այգի» [1, էջ 22]:

Ի դեպ, Յունգը գտնում է, որ օժտված երեխաների մոտ անուշադրությունը, ցրվածությունն առաջանում են որպես արտաքին ազդեցությունների հանդեպ լրացուցիչ պաշտպանություն: Դրա նպատակն է հանգիստ և առանց խոչընդոտների տրվելու երևակայության ներքին գործընթացներին: Դարձյալ անդրադառնալով հանրահայտ մարդկանց կենսագրությանը՝ նշենք Նապոլեոնի կենսագիրների տեղեկությունը, ըստ որոնց՝ վերջինս իրեն իր ընկերներից անսահմանորեն հեռու էր զգում: «Մարդկանց մեջ միշտ միայնակ՝ ես վերադառնում եմ իմ անուրջներին միայն այն ժամանակ, երբ մեն-մենակ եմ, ինքս ինձ հետ» [2, էջ 26]:

Սակայն միայն յուրահատուկ հետաքրքրությունների և վառ երևակայության առկայությունը դեռ չի ապացուցում օժտվածության ակնհայտությունը, քանի որ մեթոդների և փսիխոզների վաղ փուլերին բնորոշ է հենց այդպիսի ֆանտազիաների և ոչ նորմալ հետաքրքրությունների առկայությունը: Այս առումով Յունգն առաջարկում է առանձնացնել օժտվածությունն ըստ ֆանտազիայի որակի: Այսինքն՝ պետք է կարողանալ տարբերել խելացի ֆանտազիան հիմարից՝ հիմք ընդունելով երևակայության յուրահատկությունը, հաջորդականությունը, ինտենսիվությունը և նրբությունը, ինչպես նաև կյանքի կոչվելու նրա հնարավորությունը: Դարձյալ անդրադառնալով Նապոլեոնի կենսագրությանը՝ հաստատենք այս մեկնաբանությունը հետևյալ տեղեկությամբ. «Օքսոնի հրետանային գնդի քսանամյա սպա Նապոլեոնը անհրաժեշտություն չէր զգում խորհելու՝ ընդունել կամ չընդունել հեղափոխությունը: Հարցը վաղուց որոշված էր. դեռ պատանեկության տարիներին, նույնիսկ աշակերտական նստարանից նա երազում էր մեծ վերափոխումների ժամանակի մասին. Սպարտան, Աթենքը, Հռոմը, որոնց մասին նա ամբողջում էր դեռևս Բրիտեյի զինվորական ուսումնարանի նստարանից սկսած. մի՞ թե այս ամենը անցյալ ժամանակների մեջ պարուրված երազանքներ չէին ապագայի, զգալության, արդարության և առաքինության թագավորության մասին» [2, էջ 47]:

Այս ամենից կարող ենք եզրակացնել, ևս մեկ անգամ համոզվել, որ օժտվածությունը մեկ գործոնով հնարավոր չէ փաստել, և ուսումնական գործընթացում շատ խնդիրներ կարող են առաջանալ, եթե անտեսվեն այս բոլոր գործոնները: Անուշադրության, ցրվածության քողի ներքո շատ օժտված երեխաներ կարող են աննկատ մնալ: Կարևոր է նաև այն, թե որքանով են ֆանտազիաները մտնում կյանքի արտաքին շերտը:

Մյուս կարևոր հատկանիշը հետաքրքրության որակն է ու աստիճանը: Հաճախ դժվար երեխաների մոտ նկատելի է հատորներով գրքեր կարդալու տենչը. կարդում են այնպես, կարծես կուլ են տալիս, և կարդում են գիշերային ժամերին կամ էլ դրսևորում պրակտիկ հմտություններ, որոնք զարմանք են առաջացնում: Այդպիսի ընթերցասիրությամբ աչքի է ընկել Նապոլեոնը: Հայտնի է, որ պատանեկության տարիների ամենակուլ կիրքը ընթերցասիրությունն էր: «Նրա դպրոցական ընկերները գնում էին խաղալու, իսկ նա մնում էր գրադարանում միայնակ, գրքերի մեջ խորասուզված» [2, էջ 87]:

Ընթերցելու գրեթե նման անհագ մոլուցք է դրսևորել նաև Չարենցը: Պատանին կարդում էր անհագ ու անվերջ՝ զարմացնելով բոլորին: Կարդում էր անկարգ, բայց լուրջ: Այսպիսին են Չարենցի հոր խոսքերը. «Էս մեր փիլիսոփան ճաշի ժամանակ մի ձեռքով գիրք է բռնում, մյուսով՝ թանապուրի գդալը» [1, էջ 24]:

Հաշվի առնելով այս առանձնահատկությունը՝ հոգեբանները օժտված երեխաներին աջակցելու և նրանց հետաքրքրությունները ուղղորդելու համար

առաջարկում են գրքի միջոցով անցկացվող թերապիա: Կարծում ենք, որ օժտված երեխաների ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպելու համար պետք է հաշվի առնել այս ամենը:

Հարկ է նշել, որ օժտվածի մոտ հոգեկան հակվածությունը պատվում է հակադրությունների լայն շրջանակում: Օժտված երեխաների մոտ դժվարություններ են առկա ոչ միայն ինտելեկտուալ ոլորտում, այլև զգացմունքների ոլորտում: Մտքի օժտվածության հետ մեկտեղ գոյություն ունի սրտի օժտվածություն: Այս բոլոր առանձնահատկությունների առկայությունը հիմք է հանդիսանում փաստելու, որ օժտված երեխաների դաստիարակումը ուսուցչից պահանջում է հոգեբանական, ինտելեկտուալ, բարոյական և «դերասանական» ընդունակություն: Ուսուցիչը պետք է հանճար լինի, որպեսզի բացահայտի աշակերտների մեջ հանճարեղություն: Ամենակին վատ չէր լինի, եթե ուսումնական հաստատություններն իրենց առջև խնդիր դնեին. ուսումնական գործընթացում ներառել միանգամայն օժտված ուսուցիչների՝ դրանով իսկ նպաստելով աշակերտների օժտվածության զարգացմանը:

Բարեբախտաբար, շատ օժտվածներ կարողանում են իրենց մասին հոգ տանել, և որքան տաղանդավոր է օժտված երեխան, այնքան շատ են նրա ստեղծագործական ընդունակությունները: Հենց այդ մասին է խոսում «հանճար» արտահայտությունը. նա իրեն դրսևորում է այնպես, որը բնորոշ չէ երեխային: «Նույնիսկ կարելի է ասել աստվածային հրեշ է, որում ոչ միայն ոչինչ չկա դաստիարակելու, այլև ընդհակառակը, դրանից պետք է պաշտպանել երեխային»,- օժտվածներին այսպես է բնորոշել Յունգը:

Ինչպես արդեն նշվել է, մեծամասամբ օժտվածության զարգացումը անհամապատասխան է անձի հասունությանը, և հաճախ տալավորություն է ստեղծվում, թե իբրև ստեղծագործող անձը մարդասիրության հաշվին է զարգացել: Երբեմն նույնիսկ այնպիսի անհամապատասխանություն է առկա հանճարի և նրա մարդկային որակների միջև, որ հարց է առաջանում՝ արդյոք լավ չի՞ լինի, եթե օժտվածությունն այդքան հզոր չլինի. «Ի վերջո, ի՞նչ է հզոր միտքը բարոյական անլիարժեքության դեպքում» [5, էջ 350]:

Ըստ Յունգի՝ օժտվածությունը բացարձակ արժեք չէ, բայց այն այդպիսին է դառնում միայն այն դեպքում, եթե անձը համաբալ է իր օժտվածությանն այնքանով, որ նրա տաղանդը կարող է օգտակար կիրառություն ունենալ: Ստեղծագործական ներուժը, դժբախտաբար, նույնպիսի հաջողությամբ կարող է ապակառուցողական լինել: Պատահական չէ, որ Յունգի կարծիքով՝ օժտվածությունը կվերածվի բարու թե չարի, որոշում է բարոյական անձը: Իսկ եթե չկա այդ բարոյական անձը, ապա ոչ մի դաստիարակող չի կարող նպաստել նրա օժտվածության զարգացմանը: Այս ամենից հետևում է, որ օժտվածության բացահայտման և զարգացման հետ մեկտեղ կանոն է հոգ տանել նաև անձի բարոյական զարգացման մասին:

Քանի որ սույն հոդվածում նպատակ ենք դրել անդրադառնալ օժտված երեխաների՝ ուսումնական գործընթացում դրսևորվող առանձնահատկություններին, ուստի և խիստ կարևորում ենք տվյալ գործընթացի ճիշտ կազմակերպումը: Հարկավ, գաղտնիք չէ, որ այսօր հոգեբանները համակարծիք չեն օժտված երեխաների առանձին ուսուցման հետ: Յունգի մոտ էլ ենք հանդիպում այդպիսի մտքի, թե դժվար է միանշանակ պատասխանել առանձին դասարաններում օժտվածների ուսուցման հարցին, մինչդեռ չի բացառվում դրա առավելությունը: Մի կողմից՝ առանձին դասարանում սովորելը կարող է բարերար ազդեցություն ունենալ օժտվածության վրա, իսկ մյուս կողմից կարելի է հակադրել այն փաստը, որ նորմալ դասարանում երեխան կծանձրանա այն առարկայից, որը լավ գիտե, իսկ մյուս առարկաները նրան կհիշեցնեն իր հետ մնալու մասին, որն, ըստ Յունգի, կարող է բարոյական անհրաժեշտ արդյունք տալ: Օժտված երեխաները հաճախ երեսառած են և այդ պատճառով սպասում են, որ իրենց հանդեպ պետք է բացառիկ վերաբերմունք ցուցաբերվի: Եվ Յունգը նշում է, որ հենց դա է նկատել է իր ուսուցիչը՝ իրականացնելով իր բարոյական հարվածը: «Այդ ժամանակից ես հասկացա, որ իմ ուսուցիչը ճակատագրի գործիք է: Նա առաջինն էր, ով զգացնել տվեց ինձ, որ աստծո շնորհներն ունեն երկու կողմ՝ լուսավոր և մութ» [5, էջ 351]:

Այս ամենից երևում է, որ Յունգը կարևորում է այն հանգամանքը, ըստ որի՝ օժտված երեխայի դաստիարակման համար ավելի լավ է, որպեսզի նա սովորի նորմալ դպրոցում մյուս երեխաների հետ, այլ ոչ թե ընդգծվի նրա բացառիկությունը՝ տեղափոխելով առանձին դասարան: Թեև, ի հակադրություն սրա, անժխտելի է առանձին դասարանի մոդելի գոյության առավելությունը՝ հիմք ընդունելով արտասահմանյան դպրոցի փորձը: Իսկ ազատ դասարանի մոդելի առավելությունը հիմնավորվում է նրանով, որ օժտված երեխաներն իրենց տաղանդի զարգացման համար պետք է ազատ տնօրինեն ժամանակն ու տարածությունը, սովորեն ընդլայնված ծրագրով և անհատական հոգածություն զգան իրենց ուսուցիչների կողմից:[4]

Քանի որ սույն հոդվածում խնդիր ենք դրել ընդգծել օժտված երեխաների առանձնահատկությունները ուսումնական գործընթացում, ապա պակաս կարևոր չէ առանձնացնել այն հանգամանքը, ըստ որի՝ օժտված երեխաների համար էական է նաև դաստիարակողի անձնական մասնակցությունն ու ուշադրությունը: Անշուշտ, հրաշալի ուսուցիչներին հիշում են սիրով, իսկ երախտագիտությամբ՝ միայն նրանց, ովքեր անդրադարձել են իրենց մարդկային որակներին:

Սա մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ, ինչ խոսք, ուսումնական նյութը կարևոր է, սակայն քերականությունը ինչպես բույսի, այնպես էլ մանկական հոգու՝ դեպի վեր ծգվող կենսական տարերքն է:

Ի դեպ, ոչ միշտ է ծանրության բեռն ընկնում ուսուցչի վրա, քանի որ հաճախ վերջինս ստիպված է լինում գործ ունենալ ընտանեկան ոչ ճիշտ դաստիարակության հետ: Պարզվում է, որ ծնողներին կուրացնում է իրենց երեխաների տաղանդը. շատերն են հիշում, որ իրենց ծնողների համար իրենք միայն տաղանդի կրողներ են համարվել:

Ինչևէ, այս ամենից երևում է, որ հասարակությունը պետք է ստեղծի այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ, որպեսզի դրանով խթանի օժտված երեխաների ճիշտ դաստիարակումն ու զարգացումը:

Հարկ ենք համարում հողվածն ամփոփել Յունգի այն մտքով, որ օժտվածը կրում է իր մեջ լույսը, և նա ընտրված է հենց բնության կողմից այդ բարձր ծառայության համար:

Գրականություն

1. Թամրազյան, Եղիշե Չարենց, Երևան, 1981:
2. Մանֆրեդ Ա. Ջ., Նապոլեոն Բոնապարտ, Երևան 1975:
3. Ландау Эрика, Одаренность требует мужества, М., 2002.
4. Одаренные дети, под ред .Буренской и Слуцкого, М., 1991.
5. Юнг. К .Г., Психология бессознательного, М., 2003.